ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ 2023 Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) **Մարզի տարեկան գործունեության ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքների իրականացում և հաշվետվության կազմում:**

Կազմվել է 2022 թվականի գործունեության ծրագրի իրականացման մոնիտորինգային հաշվետվությունը (տարեկան): 2023 թվականի գործունեության ծրագրի իրականացման մոնիտորինգային հաշվետվությունը (տարեկան) (http://shirak.mtad.am/socio-economic-situation/):

2) **ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր:**

2023թ. ներկայացված 32 (130 ենթածրագիր) սուբվենցիոն ծրագրերից, որի ընդհանուր արժեքը կազմել է 9,5 մլրդ դրամ, հաստատվել է **27 (108 ենթածրագիր)** որի ընդհանուր արժեքը կազմում է 7,477,351,477 դրամ, ՀՀ կառավարության համամասնությունը 3,895,570,215 դրամ (52.1%)՝ ավարտված (14), ընթացիկ (10), մրցույթ չի հայտարարվել (2 ծրագիր) և համալիր փորձաքննություն (1 ծրագիր):

- Գյումրի համայնք՝ 7 ծրագիր (4,231,376,786 դրամ, ՀՀ Կառավարության՝ 45.1%):
- Ախուրյան համայնք՝ 9 ծրագիր (1,491,438,768 դրամ, ՀՀ Կառավարության՝ 55.1%):
- Արթիկ համայնք՝ 3 ծրագիր (732,729,298 դրամ, ՀՀ Կառավարության՝ 63.9%):
- Անի համայնք՝ 2 ծրագիր (588,201,665 դրամ, ՀՀ Կառավարության՝ 76.4%):
- Աշոցք համայնքի՝ 4 ծրագիր (339,650,384 դրամ, ՀՀ Կառավարության՝ 60.4%):
- Ամասիա համայնք՝ 2 ծրագիր (93,954,576 դրամ, ՀՀ Կառավարության՝ 46.8%):

2023թ. Ֆինանսավորված ծրագրեր 28 ծրագիր (163 ենթածրագիր)՝ 5,150,687,904 դրամ, որից ՀՀ կառավարության համամասնությունը 2,697,950,402 դրամ (52.4%):

- Գյումրի համայնք՝ 6 ծրագիր (3,321,481,117 դրամ, ՀՀ կառավարության՝ 50.1%):
- Ախուրյան համայնք՝ 6 ծրագիր (722,545,522 դրամ, ՀՀ կառավարության՝ 61%):
- Արթիկ համայնք՝ 5 ծրագիր (419,815,179 դրամ, ՀՀ կառավարության՝ 48.9%):
- Անի համայնք՝ 2 ծրագիր (200,182,722 դրամ, ՀՀ կառավարության՝ 63.2%):
- Աշոցք համայնքի՝ 5 ծրագիր (334,979,265 դրամ, ՀՀ կառավարության՝ 54.7%):
- Ամասիա համայնք՝ 4 ծրագիր (151,684,099 դրամ, ՀՀ կառավարության՝ 50.9%):

Ըստ համայնքների.

Գյումրի համայնք

- Գյումրի համայնքին պատկանող շենքերի/շինություններին արևային համակարգի տեղադրում՝ 745.6 մլն դրամ։
- Գյումրի համայնքի 22 փողոցների հիմնանորոգում՝ **(հրապարակի հիմնանորոգում, Կոմիտաս փողոցի ասֆալտապատում)** 2 մլրդ 199.5 մլն դրամ։
- Բազմաֆունկցիոնալ տեխնիկայի ձեռքբերում՝ 151.1 մլն դրամ։
- Գյումրի համայնքի սոցիալական բնակարանների և մշակույթային կենտրոնների վերանորոգում՝ 85 մլն դրամ։
- Գյումրի համայնքի ՀՈԱԿ-ների և բակերի կարիքների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում (նստարաններ, աղբամաններ)՝ 10.2 մլն դրամ։
- Գյումրի համայնքի կարիքների համար բազմաֆունկցիոնալ տեխնիկաների և սարքավորումների ձեռքբերում (2 խոտհնձիչ, 1 հողը փխրեցնոց սարք, 1 աղբատար և 1 բեռնատար մեքենաներ)՝ 130.1 մլն դրամ։

Ախուրյան համայնք

- ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Շիրակ գյուղում 2 խմբասենյակով 46 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի կառուցում՝ 24.7 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ գյուղի մանկապարտեզի շենքի կառուցում՝ 97 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բենիամին բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգում՝ 85.7 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Կառնուտ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում՝ 2 փուլով՝ 154.1 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի՝ Բենիամին, Ազատան, Երազգավորս, և Ախուրյան բնակավայրերի ներբնակավայրային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ **(Ազատան, Երազգավորս, Ախուրյան բն Շահբազյան փողոց)**՝ 181.4 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բայանդուր բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցման աշխատանքներ՝ 2 փուլով՝ 179.6 մլն դրամ։

Արթիկ համայնք

- Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի Տուֆագործների և Թամանյան փողոցների ասֆալտապատում և Շիրակացի փողոցի մայթի կառուցում՝ 116.1 մլն դրամ։
- Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրի թվով 6 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում՝ 69.9 մլն դրամ։
- Արթիկ համայնքի Արթիկ, Արևշատ, Նահապետավան, Պեմզաշեն, Սարալանջ և Հառիճ բնակավայրերի ճանապարհների տուֆ քարով սալապատում **(Հառիճ բն)**՝ 41.8 մլն դրամ։
- Արթիկ համայնքի Արթիկ, Հայկասար, Հայրենյաց, Պեմզաշեն, Սարատակ, Վարդաքար, Տուֆաշեն, Արևշատ, Հովտաշեն և Գետափ բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում՝ 71.2 մլն դրամ։
- Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի թվով 15 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում՝ 120.9 մլն դրամ։

Անի համայնք

- Լանջիկ բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման ներքին ցանցի կառուցում՝ 156.2 մլն դրամ։
- Անի համայնքի կարիքների համար բազմաֆունկցիոնալ տեխնիկաների ձեռքբերում (էքսկավատոր բեռնիչ)՝ 44 մլն դրամ։

Աշոցք համայնք

- Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրում պուրակի կառուցման աշխատանքներ (2 փուլ)՝ 121 մլն դրամ։
- Աշոցք համայնքի Աշոցք, Սիզավետ, Ցողամարգ, Գոգհովիտ, Արփենի, Մուսայելյան, Փոքր Սարիար և Սալուտ բնակավայրերի համայնքային կենտրոնների նորոգման և վերակառուցման աշխատանքներ՝ 63.9 մլն դրամ։
- Աշոցք համայնքի Արփենի, Կաքավասար, Բավրա և Սարագյուղ բնակավայրերի խմելու ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ՝ 32.4 մլն դրամ։
- Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրում ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներ՝ 71.8 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա, Սարագյուղ, Զույգաղբյուր բնակավայրերում բնական գազի ներքին ցանցի կառուցում՝ 45.8 մլն դրամ։

Ամասիա համայնք

- ՀՀ Շիրակի մարզի Արփի համայնքի Աղվորիկ, Բերդաշեն, Զարիշատ, Զորակերտ գյուղական համայնքների ջրագծի կառուցում՝ 23.8 մլն դրամ։
- Արփի համայնքի Աղվորիկ, Արդենիս և Զարիշատ բնակավայրերի համայնքային կենտրոնների նորոգում՝ 33.8 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 2-րդ փողոցից մինչև 24 փողոցն ընկած հատվածի ասֆալտապատման աշխատանքներ (2 փուլ)՝ 85.1 մլն դրամ։
- ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Արդենիս և Զարիշատ բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցում՝ 8.9 մլն դրամ։

3) Հյուրանոցային տնտեսությունների գույքագրում և հյուրանոցային տնտեսությունների և այլ կազմակերպությունների հետ զբոսաշրջության բնագավառում համագործակցություն։

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեին տրամադրվել է ՀՀ Շիրակի մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտների զբաղվածության մասին տեղեկատվություն (http://shirak.mtad.am/arishirak/)։

4) Հանրապետական և միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու, Հայաստանի մարզերի և այլ երկրների, միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցություն իրականացնելու համար։ Ինչպես նաև միջազգային, բարեգործական, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների կողմից Մարզում իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվության հավաքագրման և ամփոփման աշխատանքներ։

2023 թվականին **«Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման» (LEAD)** ծրագրի շրջանակներում ձևավորվել է 3-րդ տեղական ակտիվ խումբը։ Երկու տեղական ակտիվ խմբերն ակտիվորեն աշխատել են իրենց տարածքային ռազմավարության մշակման գործում՝ ներգրավելով համայնքների ավելի քան 200 բնակիչների։ ՏԱԽ անդամները մասնակցել են Վրաստանում փորձի փոխանակման՝ վրացական ՏԱԽ-երի հետ հանդիպելու և իրականացված ծրագրերին ծանոթանալու ճանապարհով։ Շիրակի մարզում կազմակերպվեց Հայաստանում առաջին ԼԻԴԵՐ միջազգային կոնֆերանսը, որի նպատակն էր երկխոսության հարթակ ստեղծել տարբեր դերակատարների համար։ 2023 թվականին հայտարարվել է դրամաշնորհներ։ Բնակավայրերում դրամաշնորհային տեղեկատվական արշավներին մասնակցել է 126 մարդ։ 1-ին փուլում 119 հետաքրքրության արտահայտման հայտեր են ստացվել, իսկ երկրորդ փուլում ընտրվել է 59 ծրագիր՝ 39 բիզնես զարգացման

նախաձեռնություններ և 20 համայնքային զարգացման նախաձեռնություններ: Արդյունքում 49 ծրագիր հաղթահարել է թույլատրելի շեմը:

LEADER-ը համայնքային զարգացման ԵՄ նախաձեռնություն է, որի նպատակն է վերակենդանացնել գյուղական շրջանները՝ տեղական համայնքների կարողությունների հզորացման և մարդկանց համախմբման միջոցով, որը կբերի սոցիալական կապիտալի, տեղական տնտեսության հզորացման և կյանքի որակի զգալի բարելավման: «LEAD4Shirak»-ի նպատակն է աղքատության, անհավասարության և խոցելիության նվազեցումը՝ ինտեգրված, կայուն և մասնակցային գյուղական զարգացման միջոցով: LEADER մոտեցման կիրառումը բարելավելու է զբաղվածությունը, գյուղական համայնքների տնտեսությունը, համայնքների կարողությունների հզորացումը և գյուղական բնակչության կենսապայմանները: Ծրագրում առանցքային են բնապահպանությունը և կանանց մասնակցության խթանումը: «LEAD4Shirak» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության ու Ավստրիական զարգացման գործակալության կողմից և իրականացվում է Հայաստանի հյուսիսային երեք մարզերում՝ Շիրակում, Լոռիում և Տավուշում, բաղկացած է երեք ենթածրագրերից:

2023 թվականի հուլիսի 31-ից օգոստոսի 4-ը Ավստրիական զարգացման գործակալության կողմից LEAD4Shirak ծրագրի շրջանակներում կազմակերպվել է ճանաչողական այց Քիշնև, Մոլդովայի Հանրապետություն: Ճանաչողական շրջագայությունը մասնակիցներին հնարավորություն ստեղծեց ավելին իմանալ Մոլդովայում «ԼԻԴԵՐ» մոտեցման էվոլյուցիայի մասին և հանդիպել Մոլդովայի ԳԻՏԽ-ի հետ՝ նրանց կողմից իրենց գյուղական համայնքներին տրամադրվող աջակցությունը և կիրառվող գործընթացները հասկանալու համար, ինչպես նաև նախարարությունների ներկայացուցիչների հետ անցկացնել «ԼԻԴԵՐ»-ի իրականացման վերաբերյալ փորձի փոխանակման հանդիպումներ:

Ամբողջ ծրագրերի ընթացքը կարող եք տեղեկանալ՝ https://www.facebook.com/LEAD4Shirak?locale=hy_AM ֆեյսբուքյան էջից:

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը «ԱՐԱՄԱԶԴ. սոցիալական տնտեսության և զբաղվածության զարգացում» ծրագրի շրջանակում 2023 թվականի նոյեմբերի 7-ին հայտարարել է «Սոցիալական տնտեսության զարգացման միջոլորտային համագործակցության դրամաշնորհային ծրագրերի» դրամաշնորհային մրցույթ: Դրամաշնորհային մրցույթի առաջին՝ գաղափարների փուլին մասնակցության հայտ էին ներկայացրել երեք թիրախ մարզերից թվով 9 ծրագրեր (Լոռի՝ 5, Շիրակ՝ 3, Գեղարքունիք՝ 1): Երկրորդ փուլի քննարկումը իրականացվելու է 2024 թվականին (https://caritas.am/hy/aramazd-social-economy-and-employability-development-project/):

2023 թվականի մայիսի 27-ից 28-ը «Ճանաչիր Հայաստանը» մարզային զբոսաշրջային ցուցահանդեսին մասնակցություն՝ բացահայտելու ՀՀ Շիրակի մարզի՝ գողտրիկ անկյունները, ուր թաքնված են բազմաթիվ մշակույթային արժեքներ, արվեստներն ու արհեստները, յուրահատուկ ուտեստները և արկածային գրավչությունները, ինչպես նաև կազմակերպվել են վարպետաց դասեր, պարային և երաժշտական ներկայացումներ: Ներկայացվել է ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջային ներուժը՝ խթանելով դեպի Շիրակի մարզ այցելությունների աճին, ներկայացնելով մարզը առավել գրավիչ և ճամփորդելու ներքին զբոսաշրջիկների համար: Միջոցառման երկու օրերի ընթացքում ՀՀ Շիրակի մարզը ցուցադրել է իր զբոսաշրջային ներուժը, գաստրոտաղավարում պատրաստել է մարզին բնորոշ կերակրատեսակ՝ պանրխաշ, ներկայացրել է գյուղական ֆոլկլոր, իլիկ մանել, օրորոցային, խաղիկներ, խնոցի, ճախարակ, գոբելենի աշխատանքներ, քանդակագործություն, Արթիկ տուֆի նմուշներ, գորգեր, դազգահի վրա գորգ գործելու գործընթաց, բրդյա արտադրանք, մանող սարք, կենդանական և բուսական աշխարհ և թանկարանների վերաբերյալ տեղեկատվություն: Կարևորելով զբոսաշրջության խթանումը Հայաստանում՝ ամբողջ ընթացքը նկարահանվել և տեղադրվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի պատոնական կայքում: Ամբողջ ընթացքը կարող եք տեղեկանալ՝ https://www.facebook.com/ArmeniaTourismCommittee ֆեյսբուքյան էջից:

5) Առևտրի և ծառայությունների բնագավառ

Հաշվառվել, կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 2023 թվականի համայնքների առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբեկտների վերաբերյալ ամփոփ տեղակատվությունը:

2023 թվականի ընթացքում իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ, Ամասիա և Գյումրի համայնքներում առևտրի և ծառայությունների ու զբոսաշրջության բնագավառներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրավական հսկողություն: